

Անգղիական ընդհանուր հիւստիստոս
անուանած ինկերով, փափաքելի է
որ վաւթով Կ. Պօլսի երկրային, ուր
ձեր պաշտօնավարներ թիւարկու համար
պէտք եղած կարգադրութիւնները
պիտի կրնաք ընել :

«Անգղիայ տարւոյ յաւիտէն մե-
ծին թրիտանիոյ և թուրքիոյ միջև
կնքեալ պայմանագիրն Ստիական
թուրքիոյ ժողովուրդոց բարւոք վար-
չութիւնն ու բարեկեցութիւնն Անգ-
ղիոյ յատուկ ուշադրութեան առար-
կայ ըլլաւ, և վերջ թաղութիւն յանձն
առաւ ինչ ինչ պարագայից մէջ այդ
ժողովուրդներն ալ օտար երկրակա-
լութեան դէմ պաշտպանել : Անգղիոյ
կառավարութիւնն այդ երկիրնե-
րուն մէջ Օսմանեան վարչութեան
բարւոքելուն և յաջողութեան իւր
ձեռքէն եկածին չափ գործակցելու
համար է որ հաստատուց այն պաշ-
տօնը, զոր այժմ ձեռք կը յանձնէ :

«Հետեւեալներ և ձեռք օժան-
դակելու հոգւած պաշտօնակալաց
գլխաւոր պարտքը պիտի լինի ձեր
հիւստիստոսական շրջանակին մէջ բը-
նակող այլ և այլ դասու. ժողովուրդոց
վիճակին վրայ քննութիւն ընել թուր-
քական իշխանութեանց օժանդակել
խորհրդատուութեամբ և այն օգտաւ
կար անցկեցութեամբ, զորս կրնաք
ձեռք բերել, ցոյց տալ այն միջոցնե-
րէն, որովք ինչպիսիք ինքն կրնայ ա-
պահովել և վարչութիւնը պարզուիլ
կամ աւելի ողորդ լինիլ, և գործա-
դիր ու դատական իշխանութեանց
կողմանէ ամեն տեսակ հարստահա-
րութիւններն ու կեղեքումներն՝ ու-
րոց վրայ անցկեցութիւն ստանաք՝ ի
գիր առնուլ և բողոքել անոնց դէմ
կրն ձեր դատողութեամբ այնպիսի
պարագայ մը կայ, որ կեդրոնական
կառավարութեան միջամտութեանը
հարկ կը ցուցնէ, պէտք է տեղեկա-
դրէք զայն վերջ թաղութիւն կառա-
վարութեան և Կ. Պօլսոյ դեպքանա-
տան, որպէս զի պէտք եղած դիտու-
ղութիւնները լինին Դրան :

«Ձեր հիւստիստոսական շրջանակին
մէջ բազում տեղեր աւազակութեան
զսպման համար հասարակային աղ-
դու դրութեան մը կազմութիւնն
ամեն նիւթական յառաջդիմութեան
առաջին պայմանն է : Ձեր ձեռքէն
եկածը պէտք է ընէք այս տնօրէ-
նութեան կարեւորութիւնն զի ալ տա-
լու համար կառավարական պաշտօնա-
տարաց, և քաջալերել այն ամեն
շանքերը զորս նորա ընեն այս նպա-
տակին համար :

«Յունիս ևի պայմանագրին ա-
ռաջին յօդուածին մէջ Սուլթանին
յանձն առած պարտականութեան
համեմատ, Ն. Վեհափառութեան Ա-
սիական երկիրներուն մէջ ՚ի գործ
դրուելիք բարենորոգմանց նկատ-
մամբ վերջ թաղութիւն կառավա-
րութեան և Դրան միջև փոխանակ-
եալ թղթակցութեան պատճեններն
արդէն ձեռք հասարկուած են : Մեր
նպատակն է որ դուք Դրան առա-
ջագրած միջոցներուն գործադրու-
թեան հսկէք, և ձեր ձեռքէն եկա-
ծըն ընէք անոնց ճշգիւ և անկեղ-
ծօրէն գործադրութիւնն ապահո-
վելու համար, և առաջարկէք ինչ որ
յարմար կը թուի ձեզ՝ այդ բարե-
կարգական միջոցներուն գործնակա-
նութեան մէջ ազդեութիւնն աւել-
ցնելու համար :

«Վերջ թաղութիւն դեպքանա-
տան պաշտօնատարներէն պիտի ըն-
դունիք այն ամեն տեղեկութիւննե-
րէն ու օժանդակութիւնը, զոր ի-
րենց ձեռքն է ձեռք տալ, և Ն. Վե-
հափառութեան կարնոյ հիւստիստ-
օսին, ինչպէս նաև Ասիական թուր-

քիոյ ծովեղերեայ նաւահանգիստնե-
րը նոտող անգղիական հիւստիստոս
հրահանգ պիտի տրուի որ հաւա-
նականաբար ձեռք համար կարեւոր
թիւն ունեցող ամեն նիւթի վրայ
հաղորդակցին ձեռք հետ :

(Ստորագրութիւն)
(Շարժանքէն)

ՀՆՈՒԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտոն 27 նոյ.
Պ. Կատարթօն իւր ընտրական պոչ-
քարը կը շարունակէ Սիւլտիոյ մէջ, ուր
ինքզինք ընտրելի ներկայացուց յառաջի-
կայ երեսփոխանական ընտրութեանց
համար :

Երկրորդ տեսնաբանութիւն մ'ըրաւ
Տալքէյթի ընտրողաց դուստրման առջև :
Լոնտոնի պահպանողական լրագիրք այս
առաւօտ խտրու կը քննադատեն այն ա-
տենաբանութիւնը, փասն զի Պ. Կատար-
թօն յայտարարած է թէ, ըստ իւր
կարծեաց՝ Երկրաւոր Բողոքական եկե-
ղեցւոյն արտօնութիւնները խափանող
օրէնքներն և Երկրաւոր երկրակալ կազ-
մաւորութեան վերաբերեալ օրէնքը՝ զոր
ազատական կուսակցութիւնը քանի մը
տարի առաջ ընդունած է, բաւական
չեղան Երկրաւոր արդարութիւն ընե-
լու : Եւ աւելցուց թէ ազատական կու-
սակցութիւնն ինքն իշխանութեան հաս-
նի, պարտի տակաւին աւելի ընդարձակ
տեղական ինքնօրինութիւն ընդհեյլ Եր-
կանայի, որպէս զի երկիրն ժողովուր-
դը զո՛ւ լինի :

Աթանաորա և այլ լրագիրք կը հաս-
տատեն թէ թաղապետական աւելի մեծ
ինքնօրինութիւն մը տալու խոստումն,
որովհետեւ արդէն նոր եղածին չափ
մեծ է արուած ինքնօրինութիւնը, այս
վտանգն ունի, որ Երկրաւոր երկր-
աւորական (թօրթիք) ինքնօրինութեան
խոստում ուրիշ նկատեն :

Լոնտոն 27 նոյ.
Դահլիշէն եկած հեռագիրք կը ծա-
նուցանեն թէ Հաղեպետան սպանակից
զիրք մը բռնեց Նիկիոսիոյ գէմ : Հաղե-
շաց թաղապետ իմացուց թէ Մասօփա-
նաւահանգիստն հարկուոր է Հաղեշաց
տանի, որ առանց զայն իւր ձեռքն ու-
նենալու չկրնար իւր բերքերուն արտա-
ծութիւնն ապահովել, և սրտեղաւոր
կապառնայ Նիկիոսիոյ գէմ :

Կարնաքային հեռագիրք մը կը ծա-
նուցանէ թէ Կիպրոս բնակեալ Եւրոպա-
ցիք մեծ տէրութեանց բաղդեր են կըզ-
դայն Անգղիական իշխանութեանց դա-
տական վարչութեան դէմ, և իրենց հիւ-
ստատենքէն միայն դատուելու իրա-
ւունք կը պահանջեն :

Վիեննա 27 նոյ.
Ձիւնոսրական Կազէթ լրագիրք կը
հաստատէ թէ Վարչախոյ մօտ Ռուսա-
կան զորաց դուստրմանը, որք իրրեւ
Դերմանիոյ գէմ սպանակիք մեկնուած
էին Դերմանական լրագրերէն, առաւել
Աւստրո-Հունգարիոյ գէմ սպանակիք
են : Սակայն լու տեղեկութիւնն ունե-
ցող ակումբներուն կարծիքն է թէ Ռու-
սիոյ կողմէ Եւրոպիոյ սպանակից վտանգը
բոլորովին փարատած է :

Այս առաւօտ հեռագիրք

Եւրոպայի 28 նոյ.
Պ. Կատարթօն երէկ նոր բանախօսու-
թիւն մ'ընելով, Թուրքիոյ նկատմամբ
Անգղիական նախարարութեան աշխար-
հավարութիւնը խտրու պարտաւեց : Պ.
Կատարթօն ըստ թէ ինք չկարծեր որ
Ռուսիա նորէն իւր երկիրն ընդարձակէ
՚ի վնաս Թուրքիոյ՝ ոչ Դանուբի կողմէն
և ոչ ալ Պարթիան : Պ. Կատարթօն կը
կարծէ թէ Լորա Պրոքսիմիտի ընթա-
ցից արդիւնքն է Թուրքիոյ բրիտանիոյ
մէջ Ռուսիոյ բարոյական ազդեցութիւնն
աւելցնել : Պ. Կատարթօն իւր խօսքը վեր-
ջացնելով խտրու պարտաւեց կառավա-
րութիւնը՝ Կարնոյ պայմանագրին պատ-
ճառաւ :

Փարիզ 27 նոյ.
Գաղղիոյ երեսփոխանաց ժողովին
բացման առթիւ, ժողովին նախագահ Պ.
Կամպէթթա բանախօսութիւն մ'ըրաւ,

յորում ժողովը Փարիզ վերադառնալուն
համար չնորհաւորելէ ետեւ, երեսփոխան-
ներուն հրաւեր կարողաց աշխատելու և
անօգուտ վիճարկութիւններէ խուսե-
լու :

Այս առաջին նստին մէջ որ և է մի-
ջադէպ չստատահեցաւ :

Պէլիւրա 27 նոյ.
Սերալիոյ իշխանը նախարարութեան
հրաժարականն ընդունեց և նոր նախա-
րարութիւն մը կազմելու գործը Պ. Բա-
րազէթի յանձնեց :

Լոնտոն 27 նոյ.	
Օսմ. Քօնս.	40 7/8
Փոթ.	1866 44
»	1893 13 3/4
»	1871 58 1/4
»	1872 20 1/2
»	1873 42
» Երկրաւ.	77 7/8
Անգլ. Քօնս.	98 7/8

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Մօնիթէօր իւր երէկուան թու-
ւոյն մէջ դարձեալ կը ծանուցանէ թէ
թէ Պէլիւրա փաշային վաղը մայրա-
քաղաքէս մեկնելուն որոշում արը-
ռած է : Վարնայի նախորդ կառա-
վարից Սայիտ փաշայ, աստիկանու-
թեան սպայ Թաշիք փէյ, և քար-
աուզար Պ. Ճօրճ Պրօքսիմիտի իրեն կըն-
կերանան :

Կուսինեէի և Փլալայի դաւառաց
յանձման պայմանաժամին երէկ
(հինգշաբթի) լրացաւ, բայց պայմա-
նաժամին երկարածքման համար Բ.
Դրան և Նիքիթա իշխանի կառավա-
րութեան միջև համաձայնութիւն
գոյացաւ : Օսմանեան կառավարու-
թիւնն յիշեալ դաւառներն առանց
արխանհեղութեան և միջնա իսկ նոր
պայմանաժամին լրանալէն առաջ Գա-
րաաղի յանձնելու համար ձեռքէն
եկածն ընել խոստացաւ : Հետեւա-
բար, Բ. Դրան կողմէ նոր հրահանգ-
ներ ղրկուեցան Վաղի Աճմա Մուխ-
թար փաշային, որ այս գործին մէջ
Օսմանեան կառավարութեան ներ-
կայացուցին է :

Մօնիթէօր Տիւ. Քօմէրս լրագիրն
իւր երէկուան թուոյն մէջ ալ հե-
տեւեալը կը գրէ Պ. Երուանդ Ռսիա-
նի վրայ .

«Հայկազն քանդակողորմ Պ. Ռս-
կանի երեք փոքր արձաններն, որոց
վրայ խօսեցանք մեր երէկուան թը-
ւով, Ապտուլլահ եղբարց լուսանը-
կարի գործարանին մէջ (Մեծ փողոց
Բերայի) ՚ի տես դրուած են, ինչպէս
նաև Պ. Ռսկանի հօր (Յակոբ Ռսկան
էֆէնտի) կիսարձանն, որ միւսնոյն
արուեստագործին ձեռքէն ելած է, և
որ նմանութեանն ու փափկու-
թեանը կողմէ միւս քանդակաց պէս
աւազգրութեան արժանի քանդակ
մ'է :

Միշէ Ի նոր անօրէնութիւն, Բ.
Դուռը Նօփի-Պաղարի դաւառէն
դուրս ելն, աշխար, ցորեն, բանիւր,
և հայ դուրս հանին արդիւնք, և
այս արդիւնքը մայրաքաղաքիս դեա-
պանատանց հաղորդեց :

Պուլլարիայէն խառնաց նոր դաղ-
թականութիւն մ'ոսկաւ : Ռմանք Կ.
Պոլիս կուգան, ոմանք ալ Տոպրուհա
կ'երթան, ուր կ'երեւի թէ լաւ ըն-
դունելութիւն կը լինի իրենց :

Սուա կը հանուի այն լուրը թէ
երկու ամիս ետքը կառավարութիւնը
արոց մէկ հինգերորդին փոխարէն
թղթագրամ չպիտի ընդունի : Այս
կարգադրութիւնն ըստ առաջնոյն
պիտի շարունակէ :

Մարտտան պաշտօնատարները

Թղթատարութեանց և հեռագրա-
տանց պաշտօնատարներէն աւելի
բաղդաւոր լինելով՝ կայսերական
հրահանգիր մը ձեռք բերին տը-
րամագրող թէ իրենց ամառկաններն
ամբողջապէս պիտի վճարուին՝ մաք-
սատան ամբողջ հասոյթներն երմա-
կան նախարարութեան զրկուելէ ա-
ռաջ, և թէ՛ ըստ առաջնոյն՝ իրենց
ամառկանները մաքսատան անտուկէն
պիտի ստանան և ոչ թէ երմառկան
անտուկէն, ինչպէս կը տրամադրէր
քանի մը շարաթ առաջ ելած ուրիշ
հրահանգիր մը, որ թղթատարու-
թեանց և հեռագրատանց պաշտօ-
նատարներուն նկատմամբ կը շա-
րունակէ ՚ի գործ դրուիլ, Ինպատ-
մաքսատան պաշտօնատարաց եղած
այս բացառութիւնը մաքսական վե-
րաւեւային մէկ բողոքագրին վրայ ու-
րաշուեցաւ, յորում ըսուած էր թէ
մաքսական պաշտօնատարաց ձեռք
մեծամեծ դուստրներ կ'անցնին, և
եթէ իրենց ամառկանները կ'անտա-
ւորապէս չ'ստանան, գուրթիւն կըր-
նան ընել :

Մարքի քէօյի մէջ Գլիւպ մը հաս-
տատեցաւ ձմեռուան ժամանակ տոյն
դիւղին մէջ բնակող Զանձանց դու-
մարման և դուարձութեան տեղ մը
լինելու համար :

Օսմանեան կայսերական Պանքա-
յին մէջ մեծ գողութիւն մ'երեւան
հանուած լինելուն զրոյցը կը հերքուի,
որովհետեւ քննութիւն լինելով տես-
նուած է թէ պատրաստ դրամաց և
արժէթղթաց հաշւոյն մէջ որ և է
պակաս չկայ :

Մօնիթէօր իւր երէկուան թու-
ւոյն մէջ այս լուրը կուտայ, Բայց
Պանքային մէջ իրապէս մեծ գողու-
թիւն մ'եղած լինելուն զրոյցը հաս-
տատութիւն կը դնէ, և վաղըթի-
ւար այս առաւօտեան թուոյն մէջ
զարմանք կը յայտնէ թէ այսպիսի կա-
նուաւոր հաստատութեան մը մէջ ինչ-
պէս կարելի է երկրորդ անգամ մեծ
գողութիւն մը լինիլ :

Գողը նոյն իսկ Պանքային պաշ-
տօնատարներէն է եղեր, և ձերբա-
կալուեր է :

Քաղաքագլխական ակմբոց մէջ կըս-
ուի թէ Հունգարացիք կը պահան-
ջեն եղեր Աւստրիական կառավարու-
թիւնէն որ Կ. Պօլսոյ Աւստրիական նոր
դեսպանն Հունգարացի մը լինի :
Հունգարացիք մասնաւոր ցաւ կըզ-
գան եղեր տեսնելով որ Աւստրալի
կոմսն և Ջիշի կոմսն՝ երկուքն ալ
Հունգարացի՝ մի և նոյն ժամանակ
պաշտօնէ կ'իյնան, Բայց կը կարծուի
թէ Սլաւ կուսակցութիւնն յաղթող
է, և Հունգարացեաց փափաքը չպի-
տի կատարի :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
Է Ս Չ Ա Մ Ը Ո Ի Մ Ո Ի Մ Ի Է	
Կիւի իրիկուս գոցուեցաւ	44.24
Այս առաւօտ բացուեցաւ	44.24
Կէս օրին	41.24
Բուսիլի երկաթուղի	Քր. 37 50
Թղթագրամ	Իր. 945

Ա. Գ. Ա. Յ. Ի.

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ
Գաղթիւ, 9 սեպտ.
Թէ Ռուսաստանի և թէ Թուրքիայի
լրագիրներում, այլ և ապագրված հա-
յերէն շատ աշխարհագրութիւններէ մէջ,
ինձ շատ անգամ հանդիպել է կարդալ
սխալ տեղեկութիւններ Պարսկաստանի
Հայերի վիճակագրութեան մասին, ու
րոնց գրեթէ բոլորն էլ ընկնում են չա-
փաղանջութեան մէջ : Նրանցից շատերը

Սյո Ընտիր գրքդիր ամեն բանա-
սէր Հայոց հետաքրքրութիւնը իրա-
ւամբ գրաւած է : Կը ծախսուի ամեն
Հայ գրավաճառաց նաև լրագրաց
ցրուիչներու ձեռքով : Գին 2 զրշ :